ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/46675-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-274-10.09.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1482 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-274-10.09.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) փոխվում է Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդի որոշման կարգը, որով անուղղակիորեն կարգավորում է նաև այդ աշխատողների հիմնական աշխատավարձի չափը:

Նախագծով առաջարկվում է վերոհիշյալ աշխատողների աշխատավարձի ֆոնդը որոշել՝ հիմք ընդունելով պետական հատվածում 50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում տարեկան միջին աշխատավարձի ցուցանիշը՝ հաշվի առնելով նաև գնաճի ցուցանիշը:

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձերի չափերը սահմանված են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) ներդրված վարձատրության միասնական համակարգի շրջանակում: Դրան համապատասխան քաղաքացիական աշխատանք կատարողների հիմնական աշխատավարձի գործակիցները, ըստ նրանց կողմից կատարվող աշխատանքի բարդության, համապատասխանեցվել են նույն բարդության աշխատանք կատարող քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձի գործակիցներին: Նույն տրամաբանությամբ սահմանվել են նաև տեխնիկական սպասարկում իրականացնողների հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները:

Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող

և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հիմնական աշխատավարձի չափերն էապես չեն կարող տարբերվել պետական իշխանության այլ մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձերի չափերից (հնարավոր են որոշակի բացառություններ)՝ աշխատավարձի գործող ֆոնդի պայմաններում, ինչն արդարացի է:

Նախագծով առաջարկվում է աշխատավարձի վերանայման այլ գործիքակազմ սահմանել Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց համար և բարձրացնել միայն վերը նշված գերատեսչություններում համապատասխան աշխատողների աշխատավարձը: Նախագծից պարզ չէ, թե ինչով է հիմնավորվում միայն նշված խմբի աշխատողների աշխատավարձի բարձրացումը, որը բովանդակային առումով հատվածական լուծում է և չի բխում պետական իշխանության մարմիններում ներդրված աշխատավարձի միասնական համակարգի սկզբունքներից: Այն նաև չի արտահայտում աշխատավարձի վերանայման ընդունված մոտեցումները (որպես կանոն աշխատավարձի վերանայումների համար հիմք է ընդունվում նվազագույն աշխատավարձի փոփոխությունը):

Բացի դրանից, նախագծի հիմնավորման մեջ քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի ֆոնդի որոշման համար հիմք ընդունվող մեծությունը՝ 132280 (66140*2) համեմատվում է 2013 թվականի Հայաստանի Հանրապետության տնտեսության միջին աշխատավարձի հետ, և այդ մեծությունը (132280) համեմատության մեջ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության 2018 թվականի միջին աշխատավարձի ցուցանիշի հետ, որի հիման վրա հաշվարկվում է այդ խմբի աշխատողների միջին աշխատավարձի ցուցանիշ (բարձրացման միտումով): Մինչդեռ Օրենքի հիմքում նման տրամաբանություն դրված չէ, որով պայմանավորված հիմնավորված չէ նաև առաջարկվող չափով աշխատավարձի ֆոնդի և դրան համապատասխան աշխատողների աշխատավարձի բարձրացումը (եթե 2020 թվականի համար հիմք ընդունվի 2018 թվականի համար հաշվարկված համանուն ցուցանիշը (171454 դրամ), ապա առանց գնաճի ցուցանիշի հաշվարկի աշխատավարձի ֆոնդը, մեր մոտավոր գնահատմամբ, կաճի շուրջ 30 տոկոսով):

Ավելին, պետական իշխանության մարմիններում ներդրված վարձատրության

միասնական համակարգի սկզբունքներին համապատասխան պետական պաշտոններ, պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց և քաղաքացիական աշխատանք կատարող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հիմնական աշխատավարձի որոշման գործակիցների միջև սահմանված հարաբերակցությունը պահպանելու նպատակով՝ պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերի որոշման համար ևս որպես կողմնորոշիչ հիմք է ընդունվում պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը (հիմնական աշխատավարձը որոշվում է բազային աշխատավարձի և համապատասխան պաշտոնի համար սահմանված գործակցի արտադրյալով):

Հարկ է նկատել նաև, որ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներով բազային աշխատավարձի չափն ուղղակիորեն կապվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության համար սահմանված նվազագույն աշխատավարձի հետ՝ նպատակ ունենալով ապահովել պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձաց, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի չափի և աշխատուժի վերարտադրության համար անհրաժեշտ ծախսերի միջև կապը, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության փոփոխությամբ պայմանավորված աշխատավարձերի վերանայման գործընթացը:

Այսինքն, վարձատրության գործող համակարգն ապահովում է աշխատավարձերի վերանայման ճկուն գործիքակազմ՝ հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական պայմանները:

Վերը նկարագրված խնդիրներից բացի, ներկայացված առաջարկության ընդունման դեպքում կստեղծվի մի իրավիճակ, որի պարագայում քաղաքացիական կամ պետական այլ ծառայողների հիմնական աշխատավարձը ավելի ցածր կլինի Հանրապետության Նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի աշխատակազմի, վարչապետի աշխատակազմի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնողների հիմնական աշխատավարձից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական իշխանության մարմիններում աշխատավարձերի բարձրացումը դիտարկում է վարձատրության միաս-

նական համակարգի շրջանակում, որի ուղղությամբ ներկայում իրականացվում են աշխատանքներ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանրային կառավարման բարեփոխումների 4 ոլորտներով իրականացվող աշխատանքների շրջանակներում կքննարկի նաև Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձերի բարձրացման հարցը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

Այդուհանդերձ հայտնում ենք, որ՝

1) նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունում «Ազգային վիճակագրական կոմիտե» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Վիճակագրական կոմիտե» բառերով.

2) նախագծի համար հիմք հանդիսացող ցուցանիշների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվությունը հրապարակված է Արմստատի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվարին» ամսական տեղեկատվական զեկույցում՝ https://www.armstat.am/file/article/sv_01_19a_142_.pdf, 70-րդ էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

15 հոկտեմբերի 2019 թվականի N 1482 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-274-10.09.2019-ԱՍ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-274-10.09.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից պլանավորմանը նախորդող տարում պետական հատվածում 50 և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպությունների հունվար-դեկտեմբերի ամիսների անվանական միջին աշխատավարձի 100 տոկոսի և աշխատողների թվաքանակի արտադրյալի միջոցով: Բյուջետային հայտերը կազմելիս այս ֆոնդը վերանայվում է ԿԲ կողմից ներկայացված գնաճի ցուցանիշների արտադրյալի միջոցով:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (հետայսու Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի և այդ աշխատողների թվի արտադրյալով»:

Կրկնապատիկ գործակցով պայմանավորված քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի ֆոնդի ձևավորման համար միջին աշխատավարձը կազմում է 66.140*2=132.280 ՀՀ դրամ: Գործակցի մեծությունը սահմանվել է Օրենքի գործադրմամբ, այն է 2013 թ. երբ միջին անվանական աշխատավարձը, ըստ վիճակագրական ծառայության կազմել է 146.524 ՀՀ դրամ: Ստացվում է, որ օրենսդիրը որոշում կայացնելիս այդ միջին աշխատավարձը սահմանել է միջին ամսական անվանական աշխատավարձի 90 տոկոսի չափով:

2018 թ. համար ՀՀ վիճակագրական պետական ծառայությունը ամսական անվանական աշխատավարձը հաշվարկել է 172.727 ՀՀ դրամ: Այլ հավասար պայմաններում, նույն տրամաբանությամբ 2019թ. քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջին աշխատավարձը պետք է կազմեր 155.454 ՀՀ դրամ, սակայն նման աշխատավարձի սանդղակ սահմանելու հնարավորություն օրենսդիրը չի տվել:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է, որ Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդի հաշվարկի հիմքում դնել ամսական անվանական աշխատավարձը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ապահովել քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատավարձի համահունչ ինդեքսավորումն ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ: